Հաստատում եմ

Տնօրեն _____ Գ.Զաքարյան

Ստուգված է

Փոխտնօրեն՝ _____ Լ. Խուդավերդյան

Երևանի Էդուարդ Բոյաջյանի անվան հ.121 հիմնական դպրոց
Դասղեկի թեմատիկ պլանավորում
2023-2024 ուստարի

8-րդ <<ա>> դասարան

Դասղեկ՝ Սուսաննա Ոսկանյան

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ ,,Դասղեկի ժամ ,, դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր:

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, ,,Մտքի հրավառություն ,, գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք:

Հ		Դասի թեման	Նշում
1	4.09-8.09	Նոր ուստարվա անելիքների ծրագրում	
2	11.09-15.09	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:	
3	18.09-22.09	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	
4	25.09-29.09	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:	
5	2.10-6.10	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդուսումնական էքսկուրսիայի ժամանակ:	
6	9.10-13.10	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:	
7	16.10-20.10	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:	
8	30.10-3.11	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:	
9	6.11-10.11	Հոգու կրթություն:	
10	13.11-17.11	Հոգու կրթություն և մտքի թռիչք:	
11	20.11-24.11	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:	
12	27.11-1.12	Աշնանային էքսկուրսիա : Դիտել ներկայացում:	

13	4.12-8.12	Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն:	
14	11.12-15.12	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:	
15	18.12-22.12	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:	
16		Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:	
17		Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի:	
18		Հայոց բանակ	
19		Մարմնակրթություն, առողջապահություն:	
20		Հիգիենիկ հարցեր:	
21		Մարդկային արատներ:	
22		Մարդկային արատներ:	
23		Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:	
24		Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:	
25		Սերը որպես տիեզերական զգացմունք:	
26		Հանճարները սիրո մասին:	
27		Սերը ոգեշնչման աղբյուր:	
28		Խրատանի, առածանի, մեկնաբանություններ:	
29		Ինքնատիրապետման մի քանի հարցեր:	
30		Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:	
31		Հաղթանակների ամիս մայիս:	
32		Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):	
33		Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:	
34		Ամփոփիչ դաս: Էքսկուրսիայի պլանավորում:	